

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ*

Հայ բանագիտությունը «Սասունցի Դավիթ» էպոսի ուսումնասիրությամբ սկսել է զբաղվել անցյալ դարի 70-ական թվականներից: Արժանահիշատակ Գաբեգին Սրվանձտյանցը, որ առաջինը գրի առավ և կորստից փրկեց մեր հերոսական էպոսը, 1874 թ. հրատարակած իր պատումի առաջարանով հիմք դրեց նաև նրա գիտական ուսումնասիրությանը: 1874 թ. տասնհինգ տարի հետո լույս է տեսնում էպոսի երկրորդ պատումը, պատումը գրառող անվանի գիտնական Մ. Արեղյանի առաջաբանով: Այնուհետև փոքր ընդմիջումներով՝ ընդհուպ մինչև 1936 թ. հրատարակվում են էպոսի նոր պատումներ ու դրանց նվիրված հոդվածներ և ուսումնասիրություններ, որոնց մեջ առանձնահատուկ տեղ են գրավում ակադեմիկոս Ն. Մառի գրախոսականը (1889 թ.) Մ. Արեղյանի պատումի հրատարակության առթիվ, պրոֆ. Գրիգոր Խալաթյանի էպոսի առաջին ուսերեն հրատարակության առաջաբանը (1897 թ.), Բագրատ Խալաթյանի «Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ» (1901 թ.), «Հայ ժողովրդական դուցազնական վեպը...» (1903 թ.), Ստ. Կանայանի «Մամիկոնյանց պատմություն» (1906 թ.), «Ջոշանց տան վեպի պատմականը» (1907 թ.) և Մ. Արեղյանի «Հայ ժողովրդական վեպը» (1908 թ.) ծավալուն ուսումնասիրությունները: էպոսի ձևավորման էպոխային, էպոսի ու հին բանահյուսության միջև եղած կապին, նրա միֆոլոգիայի և բանասիրական մի շարք հարցերին հիշյալ հետազոտողների տված մեկնաբանությունները մինչև այսօր էլ գիտական լուրջ հետաքրքրություն են ներկայացնում: Նրանց ջանքերով էպոսը դարձավ գիտական ուսումնասիրության առարկա և իբրև այդպիսին դուրս եկավ ազգային շրջանակներից: Շատ շուտով նրանով սկսեցին հետաքրքրվել ուսական ու եվրոպական գիտնականները:

էպոսի իսկական ուսումնասիրությունն սկսվում է 1939 թ. նրա հազարամյակի տոնակատարության օրերից: Այդ օրերին լույս տեսան էպոսի համահավաք տեքստը հայերեն և ռուսերեն լեզուներով՝ ակադեմիկոս Ի. Ա. Օրբելու ընդարձակ առաջաբաններով, հոբելյանական հանդիսավոր նիստին նույն հեղինակի կարդացած զեկուցումը, հոդվածների երկու ժողովածուներ (մեկն Արմֆանի, մյուսը Պետական համալսարանի հրատարակությամբ) և բազմաթիվ հոդվածներ ինչպես հայկական ռեսպուբլիկայի, այնպես էլ եղբայրական ռեսպուբլիկաների թերթերում և ամսագրերում:

Գրախոսվող «Հայկական հերոսական էպոսը» դիրքը էպոսի 1000-ամյակի տոնակատարության օրերին ակադեմիկոս Ի. Ա. Օրբելու կարդացած վերահիշյալ զեկուցման և էպոսի համահավաք տեքստի հայերեն և ռուսերեն հրատարակությունների առաջաբանների վերամշակված հրատարակությունն է: Այդ դիրքը էպոսի մարքսիստական գնահատության առաջին խոսքն է «Պրավդայի» առաջնորդողից հետո: Այդտեղ բացառությամբ արվեստի հարցերի, հեղինակն անդրադառնում է էպոսի գրեթե բոլոր հիմնական պրոբլեմներին ու հարցերին:

Դրանցից առաջինը վերաբերվում է էպոսի շորս ճյուղի միասնականությանը: Նշելով, որ շնայած էպոսի ճյուղերից յուրաքանչյուրը ստեղծվել է տարբեր ժամանակ և արտացոլում է միանգամայն տարբեր էպոխա, այնուամենայնիվ սյուժետային մի հիմնական գծով կապված են իրար հետ և մի կուռ ամբողջություն են կազմում: Այս ճիշտ թեզի հիմնավորման համար բերվում է արտաքուստ աննշան թվացող երկու փաստ, որոնցից մեկը էպոսին տրված «Սասնա ծռեր», «Ջոշանց տուն», և «Քաջանց տուն» անվանումներն են: Վերլուծելով «Սասնա ծռեր» անվանումը ցույց է տրվում, որ էպոսում «Ծուռ» բառն ունի ոչ ուղղակի իմաստ, այլ բաշի, կտրիճի իմաստ և, որ հետևապես նրանում գործող դրական հերոսները ոչ թե ծռեր են, խենթեր են, այլ բաշեր են, կտրիճներ են: Նույն իմաստն են արտահայտում նաև «Քաջանց տուն» — բաշերի տուն և «Ջոշանց տուն» անվանումները: «Ջոշանց տուն» չի նշանակում ջոշերի —

* Иосиф Орбели, Армянский героический эпос. Издательство Академии наук Армянской ССР, Ереван, 1956, 143 стр.

իշխողների տուն, ինչպես սխալ կերպով կարծել են ոմանք (Ստ. Կանայան և այլն), այլ մեծերի — հսկաների տուն՝ Այնուհետև մատնացույց է արվում ողորմիս — նախերգը, որտեղ իրրե կանոն հիշատակվում են էպոսի բոլոր ճյուղերում գործող հերոսները, անկախ պատմվելիք ճյուղի քանակից։ Այս փաստը ևս ճիշտ կերպով համարվում է էպոսում գործող հերոսների և էպոսի ճյուղերի միջև եղած կապի ու միասնության արտահայտություններից մեկը։ էպոսի տարբեր անվանումների և նախերգներում հիշատակվող հերոսների մասին խոսվել է նաև նախահոկտեմբերյան հայ բանագիտության մեջ։ Սակայն մեթոդոլոգիական սխալ դիրքերից ելնելով նախահոկտեմբերյան հայ բանագիտությունը հարցը լուծել է ձևականորեն՝ էպոսի գաղափարական բովանդակությունից կտրված։ Եվ պատահական չէ, որ նրա ներկայացուցիչներից ոչ մեկը քննության առարկա չդարձրեց էպոսի կերպարները։ Բնականորեն իր նախորդների ակադեմիկոս Ի. Ա. Օրբելին էպոսի շորս ճյուղերի միասնության հարցը վերահիշյալ փաստերի հիման վրա լուծում է էպոսի գաղափարական բովանդակության հետ սերտորեն կապված, ընդգծելով հատկապես, որ ճյուղերի և հերոսների միասնությունը դա հենց էպոսի գաղափարական միասնությունն է։ «էպոսի հերոսների շորս սերունդը, գրում է նա, մեկը մյուսին լրացնելով, ավելի ճիշտ, միասին կազմելով մի ամբողջություն, իրենց մեջ արտացոլել են իրենց կերպարներն ստեղծող ժողովրդի պատկերացումները և իր ճակատագրի մասին, և իր գոյության իրավունքի համար մղած կռիվի մասին, և երազանքները այն մասին, թե ինչ է հարկավոր, որպեսզի մարդիկ լինեն բախտավոր»։

Այս տեսանկյունից էլ քննության առարկա են դառնում էպոսի կերպարները։ Առաջին ճյուղում գործող հերոսներից անդրադառնում է Սանասարին և Դեղձունին։ Սանասարի գործողությունների վերլուծությունից հետո իրրե բնութագիր նշում է, որ նա դեռևս սերտորեն կապված է հին միջերի հետ և իր մեջ մարմնավորում է կոսմիկական էակի շատ գծեր։ Դեղձունի կերպարում տեսնում է տան տիրակալին, որը Սանասարի մահից հետո որոշ ժամանակ նույնիսկ կառավարում է երկիրը։ Թե այս վարրագծով և թե երկվորյակ եղբայրներից մեկի հետ ամուսնանալու առաջարկով Դեղձունը սերտորեն կապվում է մայրիշխանության էպոխայի հետ։ Այսուհանդերձ, ինչպես Սանասարն ու Դեղձունը, այնպես էլ Բաղդասարն ու Մովսիսարը իրրե վիպական կերպարներ չեն դադարում արարական տիրակալության շրջանի հերոսներ լինելուց, չեն կտրվում այն դարավոր պայքարից, որի պատկերմանն էլ հենց նվիրված է էպոսը։ Վիպական Սասունի հիմնադրամբ, որը սիմվոլացնում է հայ ժողովրդի հայրենիքի վիպական հիմնադրումը, և ժողովրդի թշնամիների դեմ մղած կռիվներով, նրանք դրսևորում են անձնուրաց սեր հայրենի հողի և ժողովրդի նկատմամբ, սեր, որ խորապես համակում է էպոսի հետագա սերունդներին՝ դառնալով նրանց գոյության իմաստն ու նպատակը։ Գրախոսվող գրքի բարձր արժանիքներից մեկն էլ այն է, որ հաջորդ կերպարների վերլուծությունը գնում է նրանց բոցավառ հաշրենասիրության բացահայտման ուղղությամբ։ Բազմաթիվ փաստերով ցույց է տրվում, օրինակ, որ Մեծ Մհերի, Դավթի, Փոքր Մհերի, Խանդուկի, Գոհարի և դրական մյուս հերոսների գործողությունների հիմքում ընկած է այն անձնուրաց սերը, որ տածում են նրանք հայրենիքի և ժողովրդի նկատմամբ։ Նշվում է այնուհետև կերպարների բազմազանությունը, նրանց միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները։ Կերպարների հմուտ վերլուծությամբ և նրանցով դրսևորված պատմական իրականության, ու ժողովրդական իդեալների բացահայտումով, ի հակադրություն նախահոկտեմբերյան հայ բանագիտության, էպոսը դիտվում է ոչ իրրե մի պատմաշրջանի վավերագիր, այլ դարերի անմիջականությամբ շնչող վիպական-գեղարվեստական մի կենդանի ստեղծագործություն։

Այս հանդամանքն, անշուշտ, չի բացառում նրա պատմականությունը, այլ ընդհանրապես, բնորոշում է այն, որովհետև ճշմարիտ էպիկական երկը—էպոսը կազմավորվում է ժողովրդի ողջ պատմության հիման վրա։ Հենց դրա լուսարանմանն էլ նվիրված է գրախոսվող աշխատության էպոսի պատմական միջուկն ու ձևավորումը՝ դուրսը։ Այստեղ ամենից առաջ ճիշտ կերպով քննադատվում է էպոսը պատմականորեն իմաստավորելու բոլոր ոչ գիտական փորձերը, սկսած էպոսի հերոսների անունները Հայաստանի գրավոր գրականության մեջ պահպանված պատմական անուններին համադրելուց, վերջացրած էպոսում ծավալվող իրադարձությունների լոկալիզացիայով։ Մանրամասնորեն ցույց է տրվում, որ բոլոր այդ փորձերի ժամանակ աշրաթող է արվել

¹ Иосиф Орбели, Армянский героический эпос, Издательство Академии наук АрмССР, Ереван, 1956, էջ 9—10.

այն կարևոր հանգամանքը, որ նրա մեջ արտացոլվել է՝ առաջին, հայերի նախահայրերի աշխարհայացքի մշակման պրոցեսը այն անսահման հեռավոր ժամանակներում, երբ մարզն առաջին անգամ սկսեց, իր գոյությունից վախճանալով, փորձեր կատարել իմաստավորելու իրեն շրջապատող բնությունը, պրիմիտիվ կերպով սահմանելու բնության երևույթների փոխադարձ կապվածությունը, երկրորդ. իր գոյության համար Հայաստանի բնակչության հազարամյակների ընթացքում մղած կռիվները, Երրորդ. այն կացութաձևը, որը պահպանելով կլանի (ցեղի) էլեմենտները էպոսի ձևավորման էպոխայում դեռևս ամբողջությամբ չէր մտել ֆեոդալական կյանքի հունը, Չորրորդ. ֆեոդալների դեմ ժողովրդի մղած տևական պայքարը և միջնադարյան Հայաստանի ռեալ կյանքի մի շարք բնորոշ գծեր¹։ Թվարկված փաստերից ելնելով էլ ճիշտ կերպով մեկնվում է այն կարծիքը, ըստ որի նույնացվել են էպոսի ծագման ու ձևավորման միանգամայն տարբեր հարցերը։ Նշվում է, որ էպոսի առանձին մոմենտներն ու էպիզոդները ստեղծվել են մեղանից մի քանի հազարամյակ առաջ, իսկ էպոսն ամբողջությամբ ձևավորվել է 9—10-րդ դարերում՝ արարական դաժան տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած լարված պայքարի պայմաններում։ Այս պատճառով էլ նրա պատմական միջուկը իրավացիորեն համարվում է ոչ թե առաջին, երկրորդ կամ չորրորդ ճյուղերը, այլ երրորդ ճյուղը՝ Դավթի ճյուղը՝ «Այդ զրույցի հիմքում, այն տեսքով ինչպես այն հասել է մեզ, կազմավորող միջուկ հանդիսացել է Դավթի մասին զրույցը»։ Եվ ապա «եթե էպոսը տարալուծենք բաղկացուցիչ մասերի կոմպոնենթ, որ ամենից պատմականը այն մասն է, որը նվիրված է արարների Հայաստանից վաղելուն, Ամենից ավելի ռեալ երկրային գծերով բնութագրված է հատկապես այդ մասը...»²։

Այս բաժնում ճիշտ է բացատրվում նաև պատմական իրական անցքերի և այդ անցքերին մասնակից մարդկանց գործողությունների հիման վրա էպոսի գլխավոր էպիզոդի և գլխավոր հերոսի աստիճանական կազմավորման պրոցեսը։ Ցույց է տրվում, որ արարական հարկահանների դեմ Հովնանի գլխավորությամբ երկու հարյուր խուժեցիկների ըմբոստ ելույթը, որն ըստ պատմական տվյալների (Թոմա Արծրունի) ավարտվում է զորքի կոտորածով ու զորավոր Ցուսուֆի սպանությամբ, աստիճանաբար վիպական գույն է ստացել այն պատճառով միայն, որ արտահայտել է հայրենիքը օտար զավթիչներից ազատ տեսնելու ժողովրդական ցանկությունը։ Վիպաստեղծման պրոցեսում հիշյալ պատմական ռեալ դեպքի ակտիվ մասնակից Հովնանին վերագրվել են այնպիսի գծեր, գործողություններ, մտքեր ու երազանքներ, որոնք բնորոշ են եղել ժողովրդի պատմական զարգացման տվյալ էտապում։ Մի անձի մեջ ողջ ժողովրդին տեսնելու հետևանքով իրեն կանոն անհատը իր հոգևոր ու ֆիզիկական հատկանիշներով դուրս է գալիս մարդկային սովորական նորմաների սահմաններից և դառնում է տիտանական կերպար։ Կոլեկտիվ ստեղծագործության բուրայում այս ձևով է ժողովրդի ծոցից ելած խուժեցի հասարակ զինվորը դարձել ժողովրդի մարմնացում, իսկ արարական հարկահանին սպանելու նրա արարքը հերոսական վեպ։

էպոսի հիմնական բովանդակության և գլխավոր հերոսի կամ հերոսների կազմավորման այսօրինակ ճիշտ մեկնաբանության հետ է կապվում նաև նրա ժողովրդայնության պրոբլեմը, որը գրախոսվող աշխատության կարևոր բաժիններից մեկն է։ Այստեղ ամենից առաջ բնություն է ննթարկվում էպոսի ծագման ֆեոդալական կոնցեպցիան, որն ինչպես ճիշտ նշվում է, առաջացավ նախ այն պատճառով, որ հաշվի չառնվեց նրանում արտացոլված դեռևս ֆեոդալական հասարակության ստադիային չհասած աշխարհայացքը (կոսմիկական միֆեր, մայրիշխանություն, հայրիշխանություն և այլն)։ Երկրորդ, այն պատճառով, որ էպոսի և պատմական նշանավոր անձերի (թագավորների) անունների համադրմամբ այն մղվեց Հայաստանի զրավոր պատմության շրջանակների մեջ, և վերջապես այն պատճառով, որ հայրենասիրությունն ու հերոսությունը վերագրվեց միայն իշխող դասակարգի ներկայացուցիչներին։ Ժխտելով էպոսի ծագման հակագիտական կոնցեպցիան Ի. Ա. Օրբելին անհերքելիորեն ցույց է տալիս, որ այն ստեղծվել է ժողովրդական ներքնախավերի կողմից և արտացոլում է արտաքին ու ներքին հայտնաբերիչների դեմ ժողովրդի մղած դարավոր պայքարն ու լավագույն ապագայի մասին նրա երազանքները, որոնք էլ հենց էպոսը դարձնում են խորապես ժողովրդական մի ստեղծագործություն։ էպոսի հերոսների մի շարք գործողությունների բնությունը (Սանասարի ու Բաղ-

¹ Иосиф Орбели. Армянский героический эпос. Издательство АН АрмССР Ереван, 1956, էջ 63—67.

² Նույն տեղում, էջ 79։

դասարի հարկ չվերցնելը սասունցիներից Փոքր Մհերի ու Ոստանու իշխանի ընդհարումը, գրավված երկրներում իշխելուց և ընդհանրապես թագավորական դահից հրաժարվելը և այլն) ընդգծում է, որ նրանք գոյության իմաստը տեսնում են ժողովրդի հետ ունեցած անխզելի կապի ու նրա բարօրության համար մղած անձնուրաց պայքարի մեջ:

Գրախոսվող աշխատության վերջին գլուխը նվիրված է Հայոսի միֆոլոգիայի համեմատական ուսումնասիրությանը և կրում է «Սասունցի Դավիթը» և մյուս ժողովուրդների էպիկական զրույցները» վերնագիրը:

Հայոսի միֆոլոգիան հայ ֆոլկլորագիտության ամենաանմշակ հարցերից մեկն է, չնայած մեր ֆոլկլորիստները ամենից առաջ և ամենից շատ զբաղվել են դրանով: Ըիշտ չհասկանալով միֆական պատկերացումների առաջացման ու ձևավորման պատճառները, նախահոկոսները հայ բանագիտությունը Հայոսի միֆոլոգիան մեծ մասամբ բացատրում էր փոխազդեցություններով ու փոխառություններով: Խճճվելով Հայոսի միֆական տարրերի և մյուս ժողովուրդների էպիկական զրույցների միանման տարրերի անվերջ համեմատությունների մեջ մի քանի հետազոտողներ նույնիսկ ակամա հայ ժողովրդին կամ նրա նախահայրերին զրկեցին միֆաստեղծման և ընդհանրապես ստեղծագործական կարողությունից:

Ակադեմիկոս Ի. Ա. Օրբելին Հայոսին նվիրված իր հետազոտությամբ սկզբունքորեն հակադրվում է դրանց: Քննադատելով ու ժխտելով փոխառության դպրոցի յուրօրինակ նիհիլիզմը, նա նմանություններին տալիս է մարքսիստական բացատրություն: Նա դրանց հիմքը ճիշտ կերպով համարում է տարբեր ժողովուրդների տնտեսական կյանքի ընդհանրությունը և այդ կյանքի զարգացման միանման պայմանները:

Հակառակ փոխառության դպրոցի հայ ներկայացուցիչների ցույց է տրվում այնուհետև, որ մեր Հայոսում առկա միֆական մի շարք պատկերացումներ ավելի հին են, քան այն պատկերացումները, որոնցից փոխառված են համարվել նրանք: Իրեն լավագույն օրինակ հիշատակվում է արևը, երկնային ուրուտը և անձրևը կամ ջուրն արտացոլող Մհերի, Ձենով Հովանի և Յուան Վերգոյի կերպարների դեռևս առանձին-առանձին գոյությունը մեր Հայոսում, կերպարներ, որոնք ի տարբերություն հունական դիցաբանության, միավորված հանդես են գալիս Ջևսի կերպարում:

Աշխատության մեջ ժողովրդի հոգևոր բոլոր արժեքները հետևողականորեն գնահատվում են մարքս-լենինյան աշխարհայացքի տեսանկյունից: Մի ժողովուրդ իր ստեղծագործությամբ չի ստվերվում հօգուտ մի այլ ժողովրդի: Տարբեր առումներով Սանասարին ու Բաղդասարին համեմատելով հունական դիոսկուրների և Կասադոր ու Պոլիդեկ փրկարար եղբայրների հետ, Արմաղանին Անդրոմեդեի, մայր հողի կերպարն արտացոլող Սասունցի պառավին Դեմետրայի, գերմանական սիրահար Էրդի, Դավթին Ափիսի և Զիգֆրիդի, իսկ մհերներին իրանական Միթրայի, հելլենական Պրոմեթեոսի, վրացական Ամիրանի, արևազական Աբրակիի և այլ ժողովուրդների դիցաբանական ու վիպական կերպարների հետ, ի հակադրություն իր նախորդների, բացահայտում և ընդգծում է հիշյալ ժողովուրդների և հայ ժողովրդի նախահայրերի միֆական պատկերացումների հարստությունն ու բազմազանությունը:

Վերոհիշյալ փաստերը և մի շարք այլ փաստեր (Իլյա Մուրոմեցի և Սասունցի Դավթի գյուրգի քաշի մանրամասները, 3, 7, 12, 40 պայմանական թվերը և այլն) հիմք են տալիս գրախոսվող գրքի հեղինակին ճիշտ կերպով առաջ քաշելու նաև տարբեր ժողովուրդների և առաջին հերթին Սովետական Միության մեջ մտնող ժողովուրդների միջև եղած հնագույն կուլտուրական կապերի հնարավորության հարցը և որոշելու «Սասունցի Դավիթ» Հայոսի տեղը մյուս ժողովուրդների էպիկական ստեղծագործությունների շարքում:

Գրախոսվող աշխատությունն, իհարկե, չի սպառում հայ ժողովրդական Հայոսի հետ կապված բոլոր հարցերը, հեղինակն իր առջև այդպիսի խնդիր չի էլ դրել: Նա ցանկացել է շոշափել Հայոսի մի քանի առավել կարևոր ու հրատապ պրոբլեմները և դրանց հիման վրա տալ նրա իրեն վիպական-գեղարվեստական ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Ամբողջ վերնաածից հետևում է, որ առաջադիր խնդիրները լուծվել են գիտական բարձր մակարդակով: Մեթոդոլոգիական ճիշտ դիրքերից, փաստական հարուստ նյութի հիման վրա լուսաբանելով Հայոսի պատմական միջուկի ու ձևավորման, ժողովրդայնության, Հայոսի և մյուս ժողովուրդների էպիկական զրույցների միջև եղած կապի բարդ ու դժվարին հարցերը, ակադեմիկոս Ի. Ա. Օրբելին հայ Հայոսագիտությունը բարձրացրել է նոր աստիճանի: Մշակական հերոսական Հայոսը աշխատությունը արժեքավոր ավանդ է սովետական ֆոլկլորագիտության մեջ: